



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ
Հատոր 2, համար 1, 2008թ.



www.y-smu.am

**ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՄԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Բարլոյան Ա. Ս., Սարգսյան Ս. Գ*., Սարիբեկյան Կ. Ս.,
Մելքումովա Մ. Վ., Մովսեսյան Ե. Ա**

Երեւանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան
«Արաբկիր» բժշկական կենտրոն՝ Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ

Տվյալ հոդվածի նպատակն է տալ վերլուծական Հայաստանում երեխաների և դեռահասների առողջական վիճակի մասին, ուսումնասիրել տենդենցներն ու գործոնները, որոնք ազդում են առողջության վրա, միջոցառումների արդյունավետության գնահատականը վերջին 10-15 տարվա ընթացքում (անկախության հռչակումից հետո):

Հիմնախնդրի ուսումնասիրության ընթացքում կատարվել է վիճակագրություն, ներառյալ առողջապահության նախարարության և ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական տվյալները, միաժամանակ Հայաստանում անցկացված մանկական առողջապահության համակարգի համապատասխան հետազոտությունների տվյալները: Վերլուծության արդյունքում երևան է հանվել ինչպես դրական, այնպես էլ Հայաստանում երեխաների և դեռահասների առողջության առաջնավիճակի բացասական տենդենցները: 90-ական թթ. կեսերին վերին սուր շնչառական ուղիների և դիաբեթային հիվանդությունների հաշվին զգալիորեն նվազել է նորածին և մանկական տարիքի մահացությունը: Այդ տենդենցը պաշտոնապես ապացուցվել է ոչ միայն ազգային վիճակագրությունում, այլ նաև անկախ հետազոտողների կողմից:

Այնուամենայնիվ մանկական մահացությունը մեր հանրապետությունում մնում է բավականին բարձր, հատկապես համեմատած Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի հետ, առանձնապես բարձր է նեոնատալ մահացության պատճառով: Հետազոտությունները ցույց են տվել մանկական հաշմանդամության և խանգարումների զարգացման բարձր տարածվածություն, որը մինչև ներառյալ 8 տարեկանների շրջանում կազմում է 12 %: Անցկացված հարցումների արդյունքում երեխաների և դեռահասների շրջանում հայտնաբերվել են մի շարք հիմնախնդիրներ, այնպիսիք, ինչպիսիք է սնման առանձնահատկությունը, հոգեկան առողջության խնդիրները, ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ի մասին անբավարար տեղեկատվությունը, միաժամանակ վերարտադրողական առողջությունն և այլն:

Վերլուծության արդյունքները վկայում են այն մասին, որ երեխաների և դեռահասների շրջանում անցկացվող ռազմավարությունն, ամբողջությամբ ցուցադրում է բավականին բարձր արդյունավետություն և հանգեցնում դրական տեղաշարժման: Այնուամենայնիվ գոյություն ունեցող հիմնախնդիրները կարևորում են նոր ռազմավարության մշակման և իրականացման անհրաժեշտություն:

Հանգուցային բառեր. երեխաներ, դեռահասներ, առողջություն, մահացածություն, հիվանդացություն: